ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 19/11/1

N 113303392 գնման պայմանագրի 23 հուլիսի 2013թ-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի

ք.Երևան «22 » նոյեմբերի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքների ծառայության ղեկավար Ռ.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **N 113303392** գնման պայմանագրի 2013 թվականի հուլիսի 23-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի 12-րդ կետը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ**
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	**ք. Երևան, Ազատության պ. 24/1**
Կառավարական տուն 1	**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Հ/Հ 163004038861**
Հ/Հ 900011022085	**ՀՎՀՀ 02500052**
ՀՎՀՀ 02505554	**Հեռ. 010 700-700**
	էլ. Հասցեն՝ corp@beeline.am
----------	----------
/ ստորագրություն /	**Ռ. Գևորգյան**
Կ.Տ	/ ստորագրություն /
	Կ.Տ

Հավելված թիվ 1
113303392 ծածկագրով պայմանագրի
« 22 » նոյեմբերի 2019թ. կնքված N 19/11/1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բջջային հեռախոսների ծառայություններ

Drive Maxi+ (200 ԳԲ) (Հետվճարային) -3 քարտ
Գերարագ Ինտերնետ նոութբուքերի, WiFi/USB մոդեմների համար

Ինտերնետի ծավալ -200ԳԲ

Արժեք-10,000դրամ/ամիս

Սակագներ

Անցում այլ հետվճարային ՍՓ-ից Drive Maxi-ին	0 դրամ
SMS դեպի ՀՀ և ԼՂՀ բջջային ցանցեր	20 դրամ
SMS դեպի միջազգային բջջային ցանցեր	30 դրամ

Եթե Ինտերնետ փաթեթը սպառվել է
Կարող եք միացնել՝ «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը

Ակտիվացման վարձ		300 դրամ
Գործողության ժամկետը		մինչև հաջորդ օրվա 23:55*
Տրամադրված Ինտերնետի արագություն		մինչև 1024 Կբիթ/վրկ
Տրամադրված Ինտերնետի ծավալ		առանց սահմանափակման
Ակտիվացում	USSD	*7007#
	SMS	7007 տեքստ 0674 համարին

Հետվճարային սակագնային փաթեթներին հասանելի է ,Հավելյալ Ինտերնետե ծառայությունը, որը կարող եք ակտիվացնել սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրված գերարագ Ինտերնետի ծավալը սպառելուց հետո:

Drive Maxi+ հետվճարային սակագնային փաթեթին բաժանորդագրվելու դեպքում կարող եք ձեռք բերել Beeline SM25 4G WiFi երթուղիչ հետևյալ հատուկ պայմաններով՝

Սակագնային փաթեթին 18 ամսով բաժանորդագրվելու դեպքում Beeline SM25 4G WiFi երթուղիչը կարող եք ձեռք բերել ընդամենը 100 դրամով՝ ներառյալ ԱԱՀ:
Սակագնային փաթեթին 12 ամսով բաժանորդագրվելու դեպքում Beeline SM25 4G WiFi երթուղիչը կարող եք ձեռք բերել 5000 դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Բաժանորդագրության դեպքում և շարժական ինտերնետի ծառայությունների պայմանագիրը բաժանորդագրության ժամկետից շուտ խզելու դեպքում Բաժանորդը վճարում է պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ WiFi երթուղիչի առուվաճառքի հայտարարված գնի և վճարված՝ 100 կամ 5000 դրամ գնի տարբերությունը:
Բաժանորդագրության դեպքում անցումը Drive Maxi+ սակագնային փաթեթից այլ սակագնային փաթեթների հնարավոր չէ:

Պայմաններ

Մինչ օրացույցային ամսվա ավարտը դուք կարող եք ակտիվացնել «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը անսահմանափակ անգամ, յուրաքանչյուր միացման համար վճարելով ծառայության ակտիվացման վարձը:

Drive Maxi ՍՓ-ով նախատեսված 200 ԳԲ ծավալով Ինտերնետը տրամադրվում է յուրաքանչյուր ամիս՝ ամսվա առաջին օրը:

ՍՓ-ով նախատեսված 200 ԳԲ գերարագ Ինտերնետի ծավալը ամբողջությամբ տրամադրվում է ամսվա առաջին օրը փաթեթին միանալու պարագայում: Այլ օր միանալու դեպքում սակագնային փաթեթի ամսական վարձը և նրանով տրամադրվող գերարագ Ինտերնետի ծավալը հաշվարկվում են սակագնային փաթեթի ձեռք բերման օրվանից մինչև տվյալ ամսվա վերջ մնացած օրերին համապատասխան:

Հետվճարային Drive Maxi ՍՓ-ի շրջանակներում օրացույցային ամսվա ընթացքում տրամադրված 200 ԳԲ գերարագ ինտերնետի մնացորդը՝ չօգտագործված ծավալը, հաջորդ ամիս չի փոխանցվում՝ զրոյացվում է:

Drive Maxi հետվճարային սակագնային փաթեթի բաժանորդներին ձայնային ծառայությունները՝ մուտքային և ելքային զանգեր կատարելու հնարավորությունը հասանելի չեն:

Ամսավճարը հաշվարկվում է օրական:

Եթե «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը ակտիվացվել է ամսվա վերջին օրը, ապա այն կգործի մինչ այդ օրվա ավարտը:

«Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը հասանելի է միայն Drive Mini, Drive Midi, Drive Maxi և Drive Maxi+ հետվճարային սակագնային փաթեթների բաժանորդներին:
Եթե «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը ակտիվացնեք 200 ԳԲ գերարագ ծավալը սպառելուց առաջ ապա ինտերնետը կգործի առանց արագության սահմանափակման, իսկ օգտագործած Ինտերնետի ծավալը զուգահեռ կսպառվի նաև սակագնային փաթեթով տրամադրված 200 ԳԲ ծավալից: Հետևաբար խորհուրդ է տրվում չակտիվացնել «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը քանի դեռ սակագնային փաթեթով տրամադրված 200 ԳԲ գերարագ ինտերնետի ծավալը չի սպառվել:

Բոլոր գները ներկայացված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Սակագնային փաթեթի նշված պայմանները գործում են միայն ՀՀ տարածքում:

** Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

ԿԱՏԱՐՈՂ
«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության պ. 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052
Հեռ. 010 700-700
էլ. Հասցեն՝ corp@beeline.am

/ ստորագրություն /
Կ.Տ

Ռ. Գևորգյան
/ ստորագրություն /
Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՎԱՆԱՆ 2 «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
STAMP CODE
REPUBLIC OF ARMENIA YEREVAN AHARONYAN 2
"VEON ARMENIA" CLOSED JOINT STOCK COMPANY